

ՍԱՂՄՈՍ 109

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Թշնամիների վրա կանչված վրեժխնդրություն	Սուտ զրպարտողների դեմ դատաստանի խնդրանք	Անձնական թշնամիներից ազատվելու աղոթք	Նեղության մեջ գտնվող մարդու տրտունջ	Հիասթափություն
<u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշտին, դավթի Սաղմոսը				
109:1-5	109:1-5	109:1-5	109:1-5	109:1-3 109:4-5
109:6-13	109:6-13	109:6-19	109:6-15	109:6-7 109:8-9 109:10-11 109:12-13
109:14-20	109:14-20		109:16-19	109:14-15 109:16-17 109:18-19
109:21-25	109:21-25	109:20-25	109:20-25	109:20-21 109:22-23 109:24-25
109:26-29	109:26-29	109:26-31	109:26-29	109:26-27 109:28-29
109:30-31	109:30-31		109:30-31	109:30-31

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն

կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սաղմոսերգուն զգում է, որ իր հանդեպ անարդարությամբ են վարվել այն մարդիկ, ում սիրում էր (առաջին պարբերություն, Սաղմ. 109:1-5):

1. նրանց խոսքերը`
 - ա. ամբարիշտ, Սաղմ. 109:2
 - բ. նենգավոր, Սաղմ. 109:2
 - գ. սուտ, Սաղմ. 109:2
 - դ. ատելության խոսքեր, Սաղմ. 109:3
 - ե. մեղադրում են, Սաղմ. 109:4
2. նրանց գործերը`
 - ա. ինձ հետ հանիրավի կռիվ են անում, Սաղմ. 109:3
 - բ. չարիք են հատուցում բարիքի փոխարեն, Սաղմ. 109:5
 - գ. սիրո փոխարեն ատելություն են հատուցում, Սաղմ. 109:5
3. հնարավոր է սա արտացոլում է դատական դահլիճ, որտեղ սաղմոսերգուի դեմ կեղծ մեղադրանքներ են հնչեցվում (տես՝ Սաղմ. 109:6-7):

Բ. Նա աղոթում է մի շարք դատաստաններ (ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐ) իր թշնամիների վրա (երկրորդ և երրորդ պարբերությունները, Սաղմ. 109:6-13, 14-20):

1. գրպարտիչը /Սատանան/ թող կանգնի նրա աջ կողմում, Սաղմ. 109:6 – BDB 763, KB 840, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
2. թող հանցավոր ճանաչվի, Սաղմ. 109:7 – BDB 222, KB 425, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
3. թող նրա աղոթքի մեղք համարվի, Սաղմ. 109:7 – BDB 224, KB 243, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
4. նրա օրերը թող նվազեն, Սաղմ. 109:8 – նույնը ինչ #3
5. նրա պաշտոնը թող ուրիշն առնի, Սաղմ. 109:8 – BDB 542, KB 534, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
6. նրա որդիները թող որբանան, Սաղմ. 109:9 – նույնը ինչ #3
7. նրա կինը թող այրիանա, Սաղմ. 109:9 – նույնը ինչ #3
8. թող նրա որդիները աստանդական թափառեն, Սաղմ. 109:10 – սա ԱՆՈՐՈՇ ԲԱՑԱՐՉԱԿ է և ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅ՝ միևնույն արմատից (BDB 631, KB 681), որը ուժգնություն արտահայտող քերականական ձև է:
 - ա. մուրան – BDB 981, KB 1371, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ
 - բ. հաց/ապրուստ փնտրեն – BDB 205, KB 233, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐNASB տարբերակը Սաղմ. 109:10-ի ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐԸ թարգմանում է որպես ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐ (այսինքն՝ «թող. . .»):
9. փոխ տվողը թող վերցնի նրա ամբողջ ունեցվածքը, Սաղմ. 109:11 – BDB 669, KB 723, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
10. թող օտարները հափշտակեն նրա վաստակածը, Սաղմ. 109:11 – BDB 102, KB 117, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
11. երբեք որևէ մեկը թող չգթա նրան, Սաղմ. 109:12 – BDB 224, KB 243, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ
12. ու ոչ մեկը թող չողորմի նրա որբերին, Սաղմ. 109:12 – նույնը ինչ #11
13. նրա սերունդները թող կարստյան մատնվեն, Սաղմ. 109:13 – նույնը ինչ #11

14. թող նրանց անունը ջնջվի, Սաղմ. 109:13 – BDB 562, KB 567, *Niphal* ՀԱՅՑԱԿԱՆ
15. նրա հայրերի անօրենությունը ՏԻՐՈՋ առջև թող հիշվի, Սաղմ. 109:14 – BDB 269, KB 269, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
16. նրա մոր մեղքը ջնջվի, Սաղմ. 109:14 – BDB 562, KB 567, *Niphal* ՀԱՅՑԱԿԱՆ
17. նրանք մշտապես թող ՏԻՐՈՋ առջև լինեն, Սաղմ. 109:15 – նույնը ինչ #3
18. թող ՏԵՐԸ նրանց հիշատակը երկրից վերացնի, Սաղմ. 109:15 – BDB 503, KB 500, *Hiphil* ՀԱՅՑԱԿԱՆ
19. հազնելու հանդերձի պես թող լինի (այսինքն՝ անեծքը), Սաղմ. 109:19 – նույնը ինչ #11
20. NASB, NKJV, NJB թարգմանում է Սաղմ. 109:20ա որպես մեկ այլ ՀԱՅՑԱԿԱՆ, սակայն այն *Qal* ԴԵՐԲԱՅ է

Գ. Սաղմ. 109:16-18 թվարկում է այն պատճառները, թե ինչու պետք է ՅԱՀՎԵՆ դատի նրան՝

1. նա չհիշեց ողորմություն ցույց տալը, Սաղմ. 109:16
2. նա հալածեց նեղյալ ու կարիքավոր մարդուն, Սաղմ. 109:16
3. նա սիրեց անիծելը, Սաղմ. 109:17
4. նա անեծքը իր հանդերձի պես հագավ, Սաղմ. 109:18

Դ. Սաղմոս 109:21-25-ում սաղմոսերգուն նկարագրում է իր կարիքը և օգնություն խնդրում (ուշադրություն դարձրեք հակադարձվող ՇԱՂԿԱՊԸ՝ «բայց Դու, ո՛վ ՏԵՐ»)՝

1. օգնիր ինձ – BDB 793, KB 889, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. ազատիր ինձ – BDB 664, KB 717, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
Նա իր աղոթքները հիմնեց՝
ա. հանուն ՅԱՀՎԵԻ անվան, Սաղմ. 109:21
բ. ՅԱՀՎԵԻ ողորմության վրա, Սաղմ. 6:4, 44:26, 109:21,26, 119:149
գ. իր կարիքի վրա՝
1) ես աղքատ եմ ու կարիքավոր
2) իմ սիրտը խոցված է
3) ես ստվերի պես անցա
4) մորեխի պես տարուբերվեցի
5) ծնկներս ծոմապահությունից տկարացան
6) մարմինս իր պարարտությունից մաշվեց
7) ես նախատինքի առարկա դարձա

Ե. Սաղմ. 109:26-29-ում սաղմոսերգուն շարունակում է իր աղոթքը և իր թշնամիների վրա ՅԱՀՎԵԻ դատաստանի համար իր ցանկությունն արտահայտում:

1. օգնիր ինձ – BDB 740, KB 810, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. փրկիր ինձ, Քո ողորմությամբ – BDB 446, KB 448, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 109:21
3. նա աղոթում է ՅԱՀՎԵԻՆ՝
ա. թող իմանան, որ նրանց դատաստանը Նրա կողմից է – BDB 393, KB 390, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
բ. թող նրանք անիծեն, բայց Դու օրհնիր – BDB 886, KB 1103, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, որը ՅԱՀՎԵԻՑ ուշադրություն է գրավում (այսինքն՝ չօրհնելու)
գ. թող ամաչեն – BDB 101, KB 116, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով (NKJV, NRSV), քանի որ Սաղմ. 109:28ա-ում կա հակադարձվող ձևակերպում, ուստի նաև 109:28գ-ում:
դ. թող ինձ մեղադրողները անպատիվ լինեն – BDB 527, KB 519, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով (NASB, NKJV, NRSV); KB

ե. իմ թշնամիները թող ամոթ հագնեն – BDB 741, KB 813, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով (NASB, NKJV, NRSV):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 109:1-5

¹Ո՛վ իմ օրհնության Աստված, լուռ մի՛ մնա:

²Քանի որ ամբարշտի բերանն ու նենգավորի բերանը
Բացվել են իմ վրա,

Իմ դեմ սուտ լեզվով են խոսում:

³Ատելության խոսքերով են պատել ինձ

Եվ ինձ հետ հանիրավի կռիվ են անում:

⁴Իմ սիրո փոխարեն իմ թշնամիները դարձան,

Բայց ես աղոթքի տրվեցի:

⁵Նաև իմ բարության փոխարեն չարիքով հատուցեցին

Ու իմ սիրո փոխարեն՝ ատելությամբ:

109:1 «Ո՛վ իմ օրհնության Աստված» Այս արտահայտությունը գտնվում է միայն այստեղ և 2 Օրինաց 10:21, սակայն թեման պարբերաբար կրկնվող է (տես՝ Սաղմոս 146-148): LXX այս արտահայտությունը թարգմանում է որպես՝ «Ո՛վ Աստված լուռությամբ մի՛ անցիր իմ փառաբանության կողքով»:

«Աստված» անունը՝ տիտղոսը *Էլոսահն* է, որը *Էլոհիմի* ԵԶԱԿԻ թիվն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Գ.

❖ «**լուռ մի՛ մնա**» Սա երբայերեն դարձվածք է, որ ՅԱՀՎԵՆ լսի և պատասխանի հավատարիմ հետևորդի աղոթքը (տես՝ Սաղմ. 28:1, 35:22, 38:12, 83:1): ԲԱՅԸ (BDB 361 II, KB 357, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) կիրառվում է ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով:

109:2-3 Թե՛ օրհնության և թե՛ վիրավորանքի խոսքերի մեջ գորություն կա: Մեր խոսքերը հայտնում են մեր սրտերը: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՈՍՔ:

AB (էջ՝ 100) դիտարկում է այս համարները որպես գազանների կողմից հարձակման բառապաշար՝

1. հարձակվող գազանների երախ (տես՝ Սաղմ. 22:13, Ողբ 3:46-47)
2. «խոսում են» (BDB 180) «հետապնդելու» իմաստով
3. «պատել են» ինչպես գազաններն են շրջապատում:

109:4-5 Հարձակման տակ լինելը ցավոտ է, սակայն կրկնակի ցավոտ է, երբ հարձակման ես ենթարկվում այն մարդկանց կողմից, ում վստահում էիր և ընկեր էին (տես՝ Սաղմ. 35:12, 38:20):

109:4բ

NASB

NKJV

NRSV

REB

NJB

TEV, Peshitta

LXX

«բայց ես աղոթքի մեջ եմ»

«բայց ես ինքս աղոթքի տրվեցի»

«անգամ երբ ես աղոթում էին նրանց համար»

«չնայած ես ոչ մի սխալ բան չարեցի նրանց»

«ես միայն կարող եմ աղոթել»

«և նրանց համար աղոթեցի»

«բայց ես կաղոթեմ»

MT-ի նշանակությունը անհայտ է, ինչպես կարող էր տեսնել անգլերենի բազմազան թարգմանություններից: Բառացի երբայերենը տալիս է «իսկ ես աղոթում եմ»:

109:5ա «իմ բարության փոխարեն չարությամբ հատուցեցին» Մենք ապրում ենք անկյալ և անարդար աշխարհում: Սա այն աշխարհը չէ, որ նախատեսել էր Աստված: Սաղմոսերգուին անակնկալի է բերել իր ընկերների, ընտանիքի ատելությունն իր հանդեպ (տես՝ Սաղմ. 35:12, 38:20, Երեմ. 18:20): Հիսուսը նույնպես այսպիսի փորձառություն ունեցավ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 109:6-13

⁶Նրա վրա մի չարագործի՝ դիր,
Սատանան թող կանգնի նրա աջ կողմում.
⁷Երբ դատվի, թող հանցավոր ճանաչվի,
Ու նրա աղոթքը թող մեղք համարվի:
⁸Նրա օրերը թող նվազեն,
Եվ նրա պաշտոնը թող ուրիշն առնի:
⁹Նրա որդիները թող որբանան,
Ու նրա կինն այրիանա:
¹⁰Նրա որդիները թող աստանդական թափառեն,
Ու մուրան և իրենց ավերակ դարձած բնակավայրերից
Հեռանալով՝ հաց փնտրեն:
¹¹Փոխ տվողը թող վերցնի նրա ամբողջ ունեցվածքը,
Ու օտարները հափշտակեն նրա վաստակածը:
¹²Երբեք որևէ մեկը թող չգթա նրան,
Ու ոչ մեկը թող չողորմի նրա որբերին:
¹³Նրա զավակները թող կորստյան մատնվեն,
Նրանց անունը թող ջնջվի գալիք սերնդի միջից:

109:6-20 Այս երկու պարբերությունները կարծես կոպիտ են հնչում ժամանակակից մարդկանց համար: Սաղմոսերգուն պարզապես խնդրում է ուխտի անեծքներ (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30) անհավատ իսրայելացիների վրա, որպեսզի դրանք իրականություն դառնան իր թշնամիների կյանքում: Նա զգում է, որ ՅԱՀՎԵԻ կողքին է, իսկ հարձակվել իր վրա նույնն է ինչ հարձակվել ՅԱՀՎԵԻ վրա:

Հրեական Սերտողության Աստվածաշունչն (էջ՝ 1407) ասում է, որ սա ամենատրեպար անեծքի բաժինն է ամբողջ Սաղմոսացում: Սա այնքան տեսանելի և պատկերավոր է նկարագրված, որ որոշ մեկնաբաններ կարծում են, որ այն արտացոլում է այն, ինչ թշնամիներն էին ասում սաղմոսերգուի դեմ (այսինքն՝ Ջերոմի Աստվածաշնչյան Մեկնություն, NJB, NIV ծանոթագրությունը): Սակայն սա հնարավոր չէ ապացուցել MT-ից: Միակ ապացույցը կարող է հանդիսանալ Սաղմ. 109:6-19-ում կիրառված ԵՉԱԿԻ թիվը, որը հավանաբար հավաքական ԵՉԱԿԻ է:

109:6 «չարագործի/զրպարտողի» Սա երբայերեն տերմին է (BDB 966, տես՝ Սաղմ. 109:20,29), որը հետագայում դարձել է անձնավորված չարքի՝ Սատանայի համար անուն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԱՏԱՆԱ

109:8 «պաշտոնը» Համատեքստից անհայտ է, թե ինչ է այս բառը (BDB 824) նշանակում: Այն կարող է վերաբերել «պահեստավորված պաշարների», տես՝ Ես. 15:7: Հարձակվողն ունի կարևոր և իշխանության դիրք: Այս արտահայտությունը (Սաղմ. 69:25-ի հետ միասին LXX-ից) կիրառվում է Գործք 1:20-ում Հուդա Իսկարիոփտացու համար: Գործք Առաքելոցը կիրառում է «պաշտոն» բառը որպես Հուդայի փոխարեն Առաքյալի պաշտոնում ընտրության համար:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 109:14-20

¹⁴Նրա հայրերի անօրենությունը ՏԻՐՈՋ առջև թող հիշվի,

Եվ նրա մոր մեղքը չընջվի:

¹⁵Նրանք մշտապես թող ՏԻՐՈՋ առջև լինեն,
Որպեսզի նրանց հիշատակը երկրից վերացնի:

¹⁶Քանի որ նա չմտաբերեց ողորմություն անելը,
**Այլ հալածեց աղքատ ու կարիքավոր մարդուն,
Որպեսզի սպանի սիրտը կոտրածի:**

¹⁷Ինչպես որ անեծքը սիրեց, անեծքը թող նրա վրա գա:
Օրհնություն չուզեց, ուստի օրհնությունը թող հեռանա նրանից:

¹⁸Անեծքը իր հանդերձի պես հագավ,
**Ուստի թող ջրի նման նրա փորը մտնի,
Ու ձեթի պես՝ նրա ոսկորների մեջ:**

¹⁹Հագնելու հանդերձի պես ու
Միշտ մեջքին կապելու գոտու պես թող լինի նրան:

²⁰Իմ հակառակորդների ու իմ անձի մասին
Չար խոսողների վարձը թող սա լինի ՏԻՐՈՋԻՑ:

109:14-15 Սա հնարավոր է ակնարկ է երկու գրքերին (այսինքն՝ գործերի գիրքը և կյանքի գիրքը), որոնք խորհրդանշում են Աստծո հիշողությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍԾՈՒ ԵՐԿՈՒ ԳՐՔԵՐԸ

109:14 Այս համարը արտացոլում է Ելից 20:5 և 2 Օրինաց 5:9-10 (ինչպես նաև տես՝ Երեմ. 32:18) խոսքերը: Ծնողների ապրելակերպը և առաջնահերթությունները հաճախ ազդում են երեխաների վրա:

109:17-19 Անեծքները աղոթք էին Աստծուն թշնամիներին պատժելու համար: Սաղմոսերգուն խնդրում է իրեն հալածողների աղոթքների վրեժխնդրությունը վերադառնա հենց իրենց դեմ: ՀԿ-ում, եթե պարզվում էր, որ ինչ-որ մեկը սուտ վկա էր դատարանում, նա էր կրում զուր տեղը մեղադրվողի պատիժը:

109:20 Սա ամփոփիչ եզրակացությունն է Սաղմ. 109:6-19-ի: Այն կարող է համեմատվել՝

1. Սաղմ. 109:6-19-ի հետ (NASB, NJKV)
2. հաջորդ պարբերության հետ (տես՝ NRSV, TEV, NJB):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 109:21-25

²¹Բայց Դ՛ո՛ւ, ո՛վ ՏԵՐ Աստված,

**Օգնի՛ր ինձ, Քո անվան համար,
Ազատի՛ր ինձ Քո բարի ողորմությամբ:**

²²Քանի որ ես աղքատ ու կարիքավոր եմ
Ու իմ սիրտը նեսումս խոցված է:

²³Ես երկարող սավերի պես անցա,

Մորեխի պես տարուբերվեցի,

²⁴Ծնկներս ծոմապահությունից տկարացան,

Ու մարմինս իր պարարտությունից մաշվեց:

²⁵Ես նրանց համար նախատինքի առարկա դարձա .

Երբ ինձ նայեցին, գլուխները երերցրին:

109:21-25 Տես՝ ամբողջական գրառումը Համատեքստային Հասկացություններ, Դ-ում:

109:21 «Ո՛վ ՏԵՐ Աստված» Բառացի սա ՅԱՀՎԵ Աղոնի է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Դ.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՏԵՐ (Adon և Kurios)

Համար 26-ում մեկ այլ կրկնակի անուն է հայտնվում Աստծո համար՝ «ՅԱՀՎԵ *Eynah*»: Այս համադրություններից շատերը չեն կրում հատուկ նշանակություն, այլ պարզապես պոետիկ տարբերակներ են:

❖ «**Քո անվան համար**» Սա պարբերաբար կրկնվող թեմա է (տես՝ Սաղմ. 23:3, 25:11, 31:3, 79:9, 106:8): Անունը ներկայացնում է անձին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»

❖ «**ողորմություն**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ

109:22բ

NASB, NKJV

NRSV, JPSOA

REB

NJB

LXX, Peshitta

«**իմ սիրտը վիրավորված է**»

«**իմ սիրտը խոցված է**»

«**իմ սիրտը . . . հուզված է**»

«**իմ վերքերը մինչև սրտիս խորքն են**»

«**իմ սիրտը անհանգիստ է**»

MT տալիս է «զարկված» (BDB 319 I, KB 320, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) ԲԱՅԸ: Այս ԲԱՅԸ միայն այստեղ է *Qal* արմատով հայտնվում: Այդ իսկ պատճառով ոմանք առաջարկում են շտկում և դարձնում այն «դողալ» (BDB 296 I):

1. խոցվել - փփ
2. դողալ - փփ (տես՝ Սաղմ. 55:5):

109:23ա Ստվերի անցողիկության նկարագրությունը նաև կիրառվում է Հոր 14:2, Սաղմ. 102:11-ում: Ստվերը կիրառվում է երկու իմաստով:

1. անցողիկություն – այստեղ
2. պաշտպանություն և հոգատարություն – տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՍՏՎԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

109:24 Այս համարը կարելի է մեկնաբանել երկու կերպ (տես՝ UBS *Ձեռնարկ*, էջ՝ 944):

1. սաղմոսերգուն հոժարական ծոմապահության մեջ էր
2. սաղմոսերգուն չունեի՝
 - ա. լավ սնունդ
 - բ. օծության համար ձիթայուղ

109:25 «զուխները երերցրին» Սա արհամարհանքի ֆիզիկական ժեստ է (տես՝ 4 Թագ. 19:21, Հոր 16:4, Սաղմ. 22:7, Եսայի 37:22, Երեմ. 18:16, 48:27, Ողբ 2:15, Մատթ. 27:39, Մարկ. 15:29):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 109:26-29

²⁶Օգնի՛ր ինձ, ո՛վ **ՏԵՐ**, իմ Աստված .

Փրկի՛ր ինձ Քո ողորմությամբ:

²⁷Թող իմանան, որ սա **Քո** ձեռքն է,

Եվ Դու արեցիր սա, ո՛վ ՏԵՐ:

²⁸Թող նրանք անիծեն, բայց **Դու** օրհնի՛ր,

Երբ հարձակվեն, թող ամաչեն,

Բայց Քո ծառան թող ուրախանա:

²⁹Իմ թշնամիները թող ամոթ հագնեն,

Ու իրենց խառնաշփոթությամբ ծածկվեն՝ ինչպես թիկնոցով:

109:26-29 Սա ՀԿ-ին առանձնահատուկ դերի հակադարձման ձև է: Սաղմոսերգուն ուզում է, որ ՅԱՀՎԵՆ վրեժխնդիր լինի իր թշնամիների ներկայությամբ (տես՝ Սաղմ. 23:5): Սա արտացոլում է դատարանի տեսարան:

109:28 «Քո ծառան» «Ծառա» (BDB 713) ԳՈՅԱԿԱՆԸ կարելի է օգտագործել՝

1. ստրուկի համար
2. թագավորի ենթակաների համար
3. երկրպագուների համար (տես՝ 2 Օրինաց 32:36,43)
4. Դևտացի երգիչների համար (տես՝ Սաղմ. 113:1, 134:1, 135:1)
5. Իսրայելի համար (տես՝ Եսայի 41:8-9)
6. BDB 714, #6, առաջարկում է, որ այստեղ կիրառությունը պարզապես քաղաքավարի դիմելաձև է Աստծուն (տես՝ Սաղմ. 19:11, 13, 27:9, 31:16, 35:27, 69:17, 143:2)
7. NASB Սերտողության Աստվածաշունչը (Էջ՝ 856) դիտարկում է սա որպես անդրադարձ Դավթի սերնդից Մեսիային (տես՝ Սաղմ. 78:20, Եսայի 42:1):
8. առաջնորդների համար հատուկ անուն՝
 - ա. Աբրահամ Ծննդ. 26:24
 - բ. Իսահակ՝ Ծննդ. 24:14
 - գ. Հակոբ՝ Եզեկ. 28:25, 37:25
 - դ. Մովսեսը՝ Թվոց 12:7, 2 Օրինաց 34:5
 - ե. Հեսու՝ Հեսու 24:29 (իր մահից հետո)
 - զ. Դավիթը՝ 2 Թագ. 3:18, 7:5,8,26

❖ **«ամաչեն»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՄՈԹ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 109:30-31

³⁰Մեծապես փառաբանելու եմ ՏԻՐՈՋԸ իմ բերանով

Ու բազմության մեջ օրհնելու եմ Նրան:

³¹Քանի որ Նա աղքատի աջ կողմում է կանգնելու,

Որ նրան փրկի նրա անձը դատապարտողներից:

109:30-31 Սաղմոսերգուն փառաբանում է ՅԱՀՎԵՆ Նրա հավատարմության և արդարության համար:

1. մեծապես փառաբանելու եմ ՏԻՐՈՋԸ – BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
2. ես օրհնելու եմ Նրան – BDB 237, KB 248, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով: Նկատելք ՄԵՌԻ տարբեր կիրառությունները՝
 1. ամբարիշտը, հհ. 2-3, 17,20
 2. արդարը, հհ. 1,30:

109:30 Սա արտացոլում է տանարի երկրպագություն:

109:31 «Քանի որ Նա աղքատի աջ կողմում է կանգնելու» Սա անմիջապես հակադրության մեջ է Սաղմ. 109:6-ի ամբարիշտ գրպարտողի՝ չարագործի հետ: Այս նույն արտահայտությունը կիրառվում է Սատանայի համար Չաք. 3:1-ում:

ՅԱՀՎԵՆ աղքատի, կարիքավորի, սոցիալապես ընկածի և անգորի պաշտպանն է:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն գիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ է ենթադրում Աստծո լռությունը:
2. Թվարկե՛ք ամբարշտի գործերը:
3. Ինչո՞ւ են շատ մեկնաբաններ կարծում, որ թշնամիները մտերիմ ընկերներն էին:
4. Ինչպե՞ս է բացատրվում մի մարդու կողմից մյուսի հանդեպ բռնության ցանկությունը:
5. Ինչպե՞ս է Սաղմ. 109:14 կապված կյանքի գրքի հասկացության հետ: